ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 043

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԵՎ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշումը ինչպես նաև քաղաքացիներ Հակոբ Վահրամի Բաղալյանի, Սարգիս Գագիկի Ղարիբյանի և Լիլիանա Էդվարդի Դեմիրչյանի դիմումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի Ելփին բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն՝

Ա) Արենի համայնքի Ելփին բնակավայրի բնակիչ Հակոբ Վահրամի Բաղալյանի սեփականություն հանդիսացող Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.13709 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի, ծածկագիրը՝ 10-020-0150-0040) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Բ) Արենի համայնքի Ելփին բնակավայրի բնակիչ Հակոբ Վահրամի Բաղալյանի սեփականություն հանդիսացող Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.12213 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի, ծածկագիրը՝ 10-020-0150-0040) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Գ) Արենի համայնքի Ելփին բնակավայրի բնակիչ Սարգիս Գագիկի Ղարիբյանի սեփականություն հանդիսացող Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.25039 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի, ծածկագիրը՝ 10-020-0149-0006) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Տալ համաձայնություն Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն՝ Լիլիանա Էդվարդի Դեմիրչյանին սեփականության իրավունքով պատկանող 23.19665 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիր՝ 10-006-0239-0770, գործառնական նշանակությունը՝ կորիզավոր, խաղող) հողամասից առանձնացված 0.15 հա հողակտորի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայի՝ գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՁԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**